

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

### Միջոցառումներ Հայաստանի Հանրապետությունում և առցանց

- ✓ 2020թ. սեպտեմբերի 1-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրոստատի կողմից համատեղ կազմակերպված «Ազգային հաշիվների վիճակագրություն. թարմացում» խորագրով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. սեպտեմբերի 1-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի կողմից կազմակերպված «Նորվեգիայում ռեգիստրի վրա հիմնված մարդահամարի մշակում» խորագրով առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. սեպտեմբերի 2-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի Skype-ով կայացած հանդիպմանը,
- ✓ 2020թ. սեպտեմբերի 2-4-ը Արմատատի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ն. Եղիգարյանը, Ա. Օհանջանովը, Ա. Բարությանը, մասնագետներ Լ. Ասլանյանը, Լ. Շահբազյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ն. Աստվածատուրովան, Ս. Խաչատրյանը, Մ. Խաչատրյանը, Ս. Մովսիսյանը, մասնագետներ Ն. Բաբոյանը, Ա. Տոնապետյանը և որակի կառավարման բաժնի ավագ մասնագետ Ա. Ամիրխանյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Կառավարության ֆինանսների վիճակագրության (GFS) զարգացում՝ համաձայն Կառավարության ֆինանսների վիճակագրության ձեռնարկ 2014»-ի խորագրով առցանց դասընթացին,

- ✓ 2020թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Վիճակագրական օրենսդրության մոդեռնիզացում» ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի աշխատանքային խմբի Կազմկոմիտեի վեբեքս հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 3-ին Արմատատի գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել է ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված «Կայուն պարենային համակարգեր և առողջ սնուցման մոդելներ» խորագրով Ասիայի և Խաղաղօվկիանոսյան երկրների տնտեսական և սոցիալական հանձնաժողովի և Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության համատեղ առցանց ֆորումին,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 3-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրոստատի կողմից համատեղ կազմակերպված «Ազգային հաշիվների վիճակագրություն. բարեկեցություն և կայունություն» խորագրով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի վեբինար հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 7-11-ը Արմատատի վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Ա. Հունանյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի կողմից համատեղ կազմակերպված «COVID-19. արձագանքը կապի և մարդկային ռեսուրսների կառավարման և ուսուցման ոլորտում» խորագրով առցանց հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 8-10-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը՝ որպես խմբի անդամ, մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ԿԶՆ-ների վիճակագրության Կառավարող խմբի վեբեքս հանդիպմանը,

- ✓ 2020թ. սեպտեմբերի 8-10-ը և 15-ին Արմատատի առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ի. Բարոյանը, Հ. Բաբայանը, Ա. Սաղումյանը, մասնագետներ Մ. Դալլաքյանը, Դ. Անանյանը, արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Կ. Անտոնյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Ա. Հունանյանը և որակի կառավարման բաժնի մասնագետ Ա. Գրբոյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Ձեռնարկություններում Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ICT) օգտագործումը ԵՄ հետազոտություն» խորագրով առցանց դասընթացին,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 10-ին Արմատատի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել է ԱՊՀ տարածաշրջանի Միջազգային հեռահաղորդակցական միության կողմից կազմակերպված ԱՊՀ տարածաշրջանում ՏՀՏ զարգացման ինդեքսի վերաբերյալ ոչ պաշտոնական առցանց տեղեկատվական նստաշրջանին,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 12-14-ը Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Գենդերային վիճակագրության վերաբերյալ առցանց հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 14-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրոստատի կողմից համատեղ կազմակերպված «Ազգային հաշիվների վիճակագրություն. թվայնացում» խորագրով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի վեբինար հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 14-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության միջև Տնտեսական համագործակցության և այլ հարակից ոլորտների ենթակոմիտեի հերթական առցանց նիստին,

- ✓ 2020թ. սեպտեմբերի 14-18-ը Արմատատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը և տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրության հարցերով Խորհրդատվական կոմիտեի ճյուղային և սոցիալ-ժողովրդագրական գծով ենթակոմիտեի առցանց (кабинет) 11-րդ նիստին,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 14-18-ը Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, շինարարության վիճակագրության բաժնի պետ Մ. Պետրոսյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը, նույն բաժնի ավագ մասնագետ Ի. Բարոյանը, գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ռ. Վարդանյանը, Լ. Գրիգորյանը, Ա. Անտոնյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Ն. Մարգարյանը, ֆինանսների վիճակագրության ավագ մասնագետ Ն. Եղիզարյանը, արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Հ. Հակոբյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Կ. Շահբազյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի ավագ մասնագետ Ն. Աստվածատուրովան, բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի ավագ մասնագետ Ա. Դաշյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ա. Երեմյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրության հարցերով Խորհրդատվական կոմիտեի տնտեսական վիճակագրության գծով ենթակոմիտեի առցանց (кабинет) 14-րդ նիստին,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 14-18-ը Արմատատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Ա. Հունանյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Վիճակագրության հարցերով Խորհրդատվական կոմիտեի արտաքին և փոխադարձ առևտրի գծով ենթակոմիտեի առցանց (кабинет) նիստին,

- ✓ 2020թ. սեպտեմբերի 14-18-ը Արմատատի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ա. Կիրակոսյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի մասնագետ Ս. Կարապետյանը և առևտրի և այլ ծառայությունների բաժնի մասնագետ Մ. Դալլաքյանը մասնակցել են Միջազգային հեռահաղորդակցական միության կողմից կազմակերպված Հեռահաղորդակցման/ՏՀՏ ցուցանիշների փորձագիտական խմբի 11-րդ և ՏՀՏ տնային տնտեսությունների ցուցանիշների փորձագիտական խմբի 8-րդ առցանց հանդիպումներին,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 14-ից հոկտեմբերի 16-ը Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի պետ Ա. Ավետիսյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերով հանձնաժողովի կողմից կազմակերպված «Էներգիայի վիճակագրության և էներգետիկ հաշիվների ներածություն» խորագրով առցանց դասընթացին,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված ՀՀ-ԵՄ Տնտեսական և հարակից հարցերով ենթակոմիտեի նիստի շրջանակում «Վիճակագրություն» թեմայով վեբեքս հանդիպմանը, ներկայացնելով՝ Համակործակցությունը վիճակագրության ոլորտում և Վիճակագրական գրասենյակում վերջին զարգացումները և բարեփոխումների ընթացքը,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 16-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR) կողմից կազմակերպված «Խթանում և տարածում» խորագրով EGRIS 1-ին ենթախմբի առցանց հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 16-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրոստատի կողմից համատեղ կազմակերպված «Ազգային հաշիվների վիճակագրություն. գլոբալացում» խորագրով ՄԱԿ-ի

Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի վեբինար հանդիպմանը,

- ✓ 2020թ. սեպտեմբերի 16-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված «Տվյալների ինտեգրում» խորագրով վեբինար հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 16-ին Արմստատի սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Հ. Սիմոնյանը մասնակցել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի վիճակագրական ինստիտուտի և Կրթության գլոբալ գործակալության կողմից համատեղ կազմակերպված Կրթության կառավարման և տեղեկատվական համակարգի օպտիմալ գործարկման վերաբերյալ տեսակոնֆերանսին,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 16-17-ը և 30-ին Արմստատի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Ա. Ներսիսյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ա. Երեմյանը, Ա. Կիրակոսյանը, Դ. Անանյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Ն. Մարգարյանը և որակի կառավարման բաժնի մասնագետ Ա. Գրբոյանը մասնակցել են Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Ճանապարհային բեռնափոխադրումներ. վիճակագրության զարգացում» խորագրով առցանց դասընթացին,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 17-ին Արմստատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են Էքսպերտայզ Ֆրանս-ի հայաստանյան ներկայացուցչության կողմից կազմակերպված ՀՀ պետական եկամուտների կոմիտեի զարգացման և վարչարարության ռազմավարական ծրագրերի վարչության պետ Սառիկյանի և Ֆրանսիայի հանրային ֆինանսների գլխավոր վարչության փորձագետ Ժակ Շաղմի միջև՝ «ՀՀ-ում ոչ ֆորմալ տնտեսության գնահատումը և նրա չափաբաժինը ՀՆԱ-ում» աշխատությունը քննարկելու նպատակով առցանց հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. սեպտեմբերի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի

տվյալների վիրտուալ համաշխարհային ֆորումի տեղեկատվական նշտաշրջանին,

- ✓ 2020թ. սեպտեմբերի 18-ին Արմստատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության և Եվրոստատի կողմից համատեղ կազմակերպված «Ազգային հաշիվների վիճակագրություն. հաղորդակցություն» խորագրով ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ազգային հաշիվների գծով փորձագետների խմբի վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. սեպտեմբերի 21-ից հոկտեմբերի 30-ը Արմստատի վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Հ. Ջանլաթյանը մասնակցել է ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման խորհրդատվության և Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից համատեղ կազմակերպված «Ծառայությունների առևտրի վիճակագրություն» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2020թ. սեպտեմբերի 22-ին Արմստատի սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի պետ Ա. Գրիգորյանը մասնակցել է Վաշինգտոն խմբի կողմից կազմակերպված Հաշմանդամության վիճակագրության գծով Վաշինգտոն խմբի առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. սեպտեմբերի 22-25ը Արմստատի բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ա. Դաշյանը, Մ. Պողոսյանը, Ն. Գրիգորյանը, Ա. Շաբոյանը, գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ռ. Վարդանյանը, Լ. Գրիգորյանը, որակի կառավարման բաժնի ավագ մասնագետ Ա. Ամիրխամյանը, արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Հ. Հակոբյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ա. Երեմյանը, շինարարության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Լ. Շահինյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի մասնագետ Մ. Դալլաքյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի մասնագետ Ա.Մարտիկյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան

գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած Տեղական միավորների, Գործունեության տեսակների (KAUs) և խմբերի նույնականացման և վիճակագրական բիզնես ռեգիստրներում տնտեսական փոփոխականների վերաբերյալ առցանց աշխատաժողովին,

- ✓ 2020թ. սեպտեմբերի 23-24-ը Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են Եվրոստատի, Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի և ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից համատեղ Լյուքսեմբուրգում տեսակոնֆերանսի միջոցով կազմակերպված Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների համար «Այլ աշխարհ. վիճակագրությունը ճգնաժամի ընթացքում» խորագրով Բարձր մակարդակի սեմինարին,
- ✓ 2020թ. սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 1-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Կլիմայի փոփոխության հետ կապված վիճակագրության արտադրողների և օգտագործողների առցանց փորձագիտական ֆորումին,
- ✓ 2020թ. սեպտեմբերի 28-ին, հոկտեմբերի 5-ին, 12-ին և 19-ին Արմատատի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ն. Եղիզարյանը, Ա. Բարուտչյանը, Ա. Օհանջանովը, մասնագետ Լ. Ասլանյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի ավագ մասնագետ Ս. Խաչատրյանը, Ս. Մովսիսյանը, մասնագետներ Ն. Բաբոյանը, Ա. Տոնապետյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի ավագ մասնագետ Ա. Թոխաթյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Հ. Ջանլաթյանը, նույն բաժնի մասնագետ Ա. Սաֆյանը, տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ա. Կիրակոսյանը և նույն բաժնի մասնագետ Մ. Դալլաթյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Եվրոստատի հրապարակման հիման վրա



քաղաքականության համապատասխան ցուցանիշների մշակում» խորագրով առցանց դասընթացին,

- ✓ 2020թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, ՄԱԿ-ի Բնակչության գործունեության հիմնադրամի և Եվրոպական ազատ առևտրի ասոցիացիայի կողմից համատեղ կազմակերպված Բնակարանային ֆոնդի և մարդահամարի գծով փորձագետների խմբի առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 2-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և Արմատատի 32 աշխատակից մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Լավ որակի վիճակագրության արտադրության և տարածման բարելավում» խորագրով առցանց դասընթացին,
- ✓ 2020թ. հոկտեմբերի 6-ին Արմատատի որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ս. Հունանյանը, Ա. Սողոմոնյանը, Ջ. Ավոյանը և Ս. Արտեյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, նույն բաժնի ավագ մասնագետ Ա. Բադալյանը, մասնագետներ Ս. Կարապետյանը և Լ. Ավետիսյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի մասնագետ Ա. Մարտիկյանը մասնակցել են ՄԱԿ Կանայք-ի կողմից և «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Ժամանակի օգտագործման հետազոտություն» ծրագրի շրջանակում Արմատատի անձնակազմի մասնագիտական կարողությունների կատարելագործմանը միտված հերթական առցանց սեմինարին,
- ✓ 2020թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ ՎՊԽ անդամը Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ, մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի Skype-ով հանդիպմանը,

- ✓ 2020թ. հոկտեմբերի 7-9-ը Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, նույն բաժնի ավագ մասնագետներ Ն. Աստվածատուրովան, Ս. Խաչատրյանը, Մ. Խաչատրյանը, Ս. Մովսիսյանը, մասնագետներ Ն. Բաբոյանը և Ա. Տոնապետյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կայացած «Արտադրական հաշվի մշակում՝ համաձայն Հաշիվների Եվրոպական Համակարգ 2010-ի» խորագրով առցանց դասընթացին,
  
- ✓ 2020թ. հոկտեմբերի 12-15-ը Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է Կորեայի վիճակագրության և Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից համատեղ կազմակերպված «Միջազգային աշխատանքային միգրացիայի վիճակագրությունը Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում» խորագրով առցանց աշխատաժողովին,
  
- ✓ 2020թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ ՎՊԽ անդամը Ա. Սաֆյանը՝ որպես խմբի անդամ, մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի ԿԶՆ-ի վիճակագրության Կառավարող խմբի վեբեքս հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. հոկտեմբերի 13-15-ը Արմատատի գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի ավագ մասնագետ Հ. Սողոմոնյանը մասնակցել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից կազմակերպված ԿԶՆ 2.4.1 ցուցանիշ՝ «Արդյունավետ և կայուն գյուղատնտեսական գործելաձևեր կիրառող գյուղատնտեսական տարածքների համամասնությունը» խորագրով առցանց դասընթացին,
  
- ✓ 2020թ. հոկտեմբերի 14-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Ն. Բաղդասարյանը, Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը, վճարային հաշվեկշռի և

արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը և բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հաճնաժողովի կողմից կազմակերպված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Վիճակագրության գծով Խորհրդատվական կոմիտեի 17-րդ նիստի տեսակոնֆերանսին,

- ✓ 2020թ. հոկտեմբերի 15-16-ը Արմստատի նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամը Ա. Սաֆյանը մասնակցել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հաճնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. հոկտեմբերի 16-ին Արմստատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի կողմից կազմակերպված 2021-2023թթ. հարկադիր տեղափոխման միասնական տվյալների կենտրոնի ռազմավարության վերաբերյալ վեբեքս հանդիպմանը,
- ✓ 2020թ. հոկտեմբերի 19-ից Արմստատի 19 աշխատակից մասնակցել են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից կազմակերպված R փաթեթի ներածական առցանց դասընթացին,
- ✓ 2020թ. հոկտեմբերի 26-ին Արմստատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ Մ. Երիցյանը, վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Բ. Պողոսյանը, մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի ավագ մասնագետ Ն. Աստվածատուրովան, ֆինանսների վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Եդիգարյանը և աշխատանքի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Զ. Ավոյանը մասնակցել են Եվրասիական տնտեսական հաճնաժողովի կողմից կազմակերպված Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների տնտեսական զարգացման կայունությունը որոշող մակրոտնտեսական ցուցանիշների հաշվարկի գծով աշխատանքային խմբի 17-րդ նիստի տեսակոնֆերանսին,

- ✓ 2020թ. հոկտեմբերի 27-29-ը Արմստատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Միգրացիայի վիճակագրության վերաբերյալ առցանց հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. հոկտեմբերի 27-30-ը Արմստատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջանը և մարդահամարի վարչության մարդահամարի պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Մելիքսեթյանը մասնակցել են ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի և ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի կողմից համատեղ կազմակերպված «Մարդահամարների և բնակարանային ֆոնդի հաշվառման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման տվյալների հիման վրա Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների չափում» խորագրով առցանց տարածաշրջանային աշխատաժողովին,
  
- ✓ 2020թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ, մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի Skype-ով հանդիպմանը,
  
- ✓ 2020թ. հոկտեմբերի 29-ին Արմստատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված «Հաղթահարելով COVID-19-ը Կովկասում և Կենտրոնական Ասիայում» խորագրով վեբինար հանդիպմանը: